կան։ Դա պայմանավորված է նրանով, որ տեխնիկական առաջընթացը բերում է հիմնական ֆոնդերի առաջանցիկ աճին՝ շրջանառու ֆոնդերի համեմատությամբ։ Սակայն, ֆոնդահատույցը կրարձրանա այն դեպքում, երբ հիմնական ֆոնդերի միավորին՝ բաժին ընկնի ավելի շատ շրջանառու ֆոնդեր։

Մտքերի աշխույժ փոխանակություն ծավալվեց հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման համար արտադրության տարբեր ոլորտներում ճիշտ համամասնությունների պահպանման հարցի շուրջը։ Հանդես եկող ընկերները (Տ. Աշիմբաև, Ա. Հարությունյան) նշեցին, որ հիմնական ֆոնդերի առանձին մասերի վերարտադրության միջև համամասնությունները կարելի է պահպանել պլանավորման հաշվեկշռային մեթոդի օգնությամբ։

Գիտաժողովում զեկուցումներ կարդացվեցին նաև արտադրության կազմակերպման ձևերի կատարելագործման (Լ. Վարդանյան), կապիտալ ներդրումների արդյունավետության վրա գների աշխարհագրության ազդեցության (Վ. Տորբին), Հայաստանի արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների փաստացի արդյունավետության (Վ. Անդրիասյան) և քննարկվող պրոբլեմի հետ առնչվող այլ հարցերի մասին։

Վերջում գիտաժողովը քննարկված հարցերի վերաբերյալ ընդունեց կոնկրետ հանձնարարականներ։

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ապրիլի 23—24-ին տեղի ունեցավ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների գիտական նստաշրջան՝ նվիրված հայ գրականության պատմության ու տեսության տարբեր հարցերի։

Ինստիտուտի դիրեկտոր Վ. Նալբանդյանի բացման խոսքից հետո լսվեցին մի շարք զեկուցումներ։ «Իումանյանի ստեղծագործական մտածողության հարցերից» թեմայով հանդես եկավ ինստիտուտի տեքստաբանության բաժնի ասպիրանտ Ջ. Ավետիսյանը, որին հաջորդեց հայ հին գրականության բաժնի գիտաշխատող Վ. Ներսիսյանի «Այլաբանությունը միջնադարի հայ տաղերգության մեջ» զեկուցումը։

Ապա լսվեցին նույն բաժնի ասպիրանտներ Կ. Մուրադյանի «Բարսեղ Կեսարացու «Վարք»-ի հայերեն գրչագիր խմբագրությունները» և Հ. Սիմոնյանի «Պղնձե քաղաքի պատմության» հայերեն թարգմանությունը և նրա բնագրային կաֆաները» զեկուցումները։

«Պատմվածքի ժանրային բնույթի ըմբռնումները ժամանակակից գրականության մեջ» թեմային էր նվիրված գրականության տեսության բաժնի գիտաշխատող Լ. Ղազարյանի զեկուցումը։

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին գրականության տեսության բաժնի գիտաշխատող Ն. Ադալյանի «Սովետահայ բալլադը» և տեքստաբանության բաժնի գիտաշխատող Ա. Ջարենցի «Եղիշե Չարենցի մի անավարտ պոեմի մասին» զեկուցումները։

Հայ նոր գրականության բաժնից զեկուցումներ կարդացին Լ. Դավթյանը՝ «Լևոն Մանվելյանի պոեզիան», Վ. Կիրակոսյանը՝ «Ինտրայի ստեղծագործությունը» և Ն. Անանյանը «Արևմտահայ սենտիմենտալ վիպագրությունը 50—60-ական թվականներին» թեմաներով։

Սովետահայ գրականության բաժնի երիտասարդ գիտաշխատող Վ. Դրիգորյանի թեման էր «Սովետահայ դրամատուրգիայի սկզբնավորումը», իսկ «Սովետական երիտասարդական արդի պոեզիայի մի քանի հարցերին» էր նվիրված Ֆ. Մելոյանի զեկուցումը։ Եվ. վերջապես, գրական կապերի բաժնի գիտաշխատող Վ. Փարթամյանը կարդաց «Հայ գրականությունը անգլերեն լեզվով հրատարակված պարբերականներում» զեկուցումը։

Երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների զեկուցումների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Սարինյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Մ. Նահապետյանը և Ա. Ջաքարյանը։